ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿԸ

(Արարատ Աղասյանի ծննդյան 55-ամյակի առթիվ)

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը ծնվել է 1956 թ. օգոստոսի 11-ին, ՀԽՍՀ-ի Սիսիան քաղաքում, ԽՍՀՄ պետբանկի հայկական գրասենյակի կառավարիչ, ՀԽՍՀ պետական ագրոարդյունաբերական կոմիտեի նախագահի առա- ջին տեղակալ Վլադիմիր Աղասյանի ընտանիքում: 1960 թ. Ա. Աղասյանը ծնողների հետ տեղափոխվում է Երևան:

1973 թ. ավարտելով Երևանի N 122 միջնակարգ դպրոցը՝ Ա. Աղասյանն ընդունվում է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետի արվեստաբանական բաժինը, որն ավարտում է 1978 թ.՝ ստանալով «արվեստի պատմաբանի» որակավորում:

1978-ից երիտասարդ արվեստաբանի գիտաստեղծագործական ու գիտակազմակերպական գործունեությունն անխզելիորեն կապվում է ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի հետ, նախ՝ որպես կրտսեր գիտաշխատող, ապա՝ ինստիտուտի գիտքարտուղար և ավագ գիտաշխատող: 2003 թ. ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կողմից Ա. Աղասյանն առաջադրվում և ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից հաստատվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, իսկ 2008 թ. վերընտրվում է նույն պաշտոնում:

1989 թ. Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում Ա. Աղասյանը պաշտպանում է ատենախոսություն՝ «Մարտիրոս Սարյանի ստեղծագործական մեթոդի ձևավորումը» թեմայով և ստանում արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1991 թ. նա ընտրվում է ինստիտուտի գիտխորհրդի անդամ, ապա՝ քարտուղար, իսկ 2003 թ. ի վեր գիտական խորհրդի նախագահն է: 1995 թ. արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի անդամ է, 2009 թ.՝ նախագահի տեղակալ: 2007 թ. Ա. Աղասյանը պաշտպանում է ատենախոսություն՝ «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX- XX դարերում» թեմայով և ստանում արվեստագիտության դոկտորի գիտական աստիճան, ապա՝ պրոֆեսորի գիտական կոչում:

2009 թ. Ա. Աղասյանն ընտրվում է Սանկտ Պետերբուրգի՝ Պետրոս Մեծի անունը կրող Գիտությունների և արվեստների ակադեմիայի թղթակից անդամ: Նա Հումանիզմի պրոբլեմների ակադեմիայի նախագահության անդամ է (2007 թ.), Փիլիսոփայության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ (2011):

Արվեստաբանական կրթության մոսկովյան փայլուն դպրոց անցած Արարատ Աղասյանը հայ կերպարվեստի պատմության լավագույն գիտակներից է: Նրա գիտական նախասիրությունների հիմնական ոլորտը XIX- XX դդ. հայ կերպարվեստի ու

գեղարվեստական մտքի պատմությունն է: Նա հեղինակ է 9 գրքի ու մենագրության, 130 գիտական և գիտահանրամատչելի հոդվածների, որոնք լույս են տեսել Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, ԱՄՆ-ի, ԳՖՀ-ի, Հունգարիայի, Լիբանանի, Լեհաստանի պարբերականներում ու գիտական ժողովածուներում: Զեկուցումներով հանդես է եկել միջազգային, համամիութենական և հանրապետական գիտաժողովներում, մասնակցել հայ արվեստին նվիրված սիմպոզիումներին: Գիտնականի աշխատություններն ու զեկուցումներն առանձնանում են մասնագիտական բարձր մակարդակով և փաստական նյութի լայն ընդգրկումով:

Իր գիտական ուսումնասիրություններում Ա. Աղասյանը մեծ կարևորություն է տալիս հարևան երկրների, ինչպես նաև Ռուսաստանի ու Եվրոպայի հետ XIX-XX դարերում հայ կերպարվեստի ունեցած առնչություններին և զուգահեռներին: Այդ հարցերի բազմակողմանի լուսաբանման շնորհիվ նա բացահայտել է ոչ միայն դրանց պատմական ձևավորման և զարգացման ընդհանուր օրինաչափությունները, այլև յուրաքանչյուրին բնորոշ տարբերությունները: Հատկապես ուշագրավ են հայ-ռուսական և հայ-ֆրանսիական գեղարվեստական կապերին նվիրված գիտական հրապարակումներն ու զեկուցումները, որոնցով նա բազմիցս հանդես է եկել ինչպես հայրենական և արտասահմանյան գիտական ժողովածուներում, այնպես էլ հանրապետական և միջազգային գիտաժողովներում, իր տեսակետները հանգամանորեն ներկայացրել է Մարտիրոս Սարյանի ու Երվանդ Քոչարի ստեղծագործությանը նվիրված մենագրություններում:

Ա. Աղասյանի գիտական վաստակը մեծ է նաև այն առումով, որ նա ուսումնասիրել է, մոռացությունից հանել և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել XIX-XX դդ. ապրած արևելահայ, արևմտահայ և սփյուռքահայ տասնյակ վարպետների անուններ և ստեղծագործություններ, որոնք իրենց ուրույն տեղն ունեն և որոշակի դեր են խաղացել նոր ու նորագույն շրջանների հայ կերպարվեստի ձևավորման ու զարգացման մեջ:

Արվեստաբանը XIX դ. արևմտահայ կերպարվեստի պատմության առաջին հետազոտողներից է: Ծանրակշիռ է նրա ներդրումը սարյանագիտության բնագավառում, ինչպես նաև խորհրդային ու հետխորհրդային հայ կերպարվեստի, այդ ժամանակվա գեղարվեստական կյանքի ուսումնասիրման գործում:

Հայաստանում և սփյուռքում լայն արձագանք է գտել ՀՀ ԳԱԱ գրահրատարակչական խորհրդի և ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով, պետական պատվերով հրատարակված, գեղարվեստական, պատմամշակութային և փաստագրական մեծածավալ նյութ պարունակող «Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում» հիմնարար ուսումնասիրությունը (Ե., 2009), որը հեղինակի երկարամյա հետազոտությունների ու պրպտումների արդյունքն է: Աշխատության մեջ առաջին անգամ հանգամանորեն ներկայացվում է հայ կերպարվեստի զարգացման պատմական ուղին՝ սկսած Ռուսաստանի կազմում 1801-1828 թթ. Արևելյան Հայաստանի ընդգրկվելուց մինչև մեր օրերը: Գրքում Երևանի, Մոսկվայի, Սանկտ Պետերբուրգի, Թբիլիսիի պետական և մասնավոր թանգարաններում ու արխիվներում պահվող ստեղծագործությունների, ցուցահանդեսային կատալոգների, ձեռագրերի ու վավերագրերի, հին ու նոր գեղարվեստական մամուլի, հայ արվեստագետների գրական ժառանգության համակողմանի ուսումնասիրման շնորհիվ կատարվում են փաստական բազմաթիվ ճշտումներ, զուգահեռներ են տարվում XIX դ. կեսերի արևելահայ և արևմտահայ կերպարվեստի բնորոշ միտումների, գեղարվեստական համանման ու յուրահատուկ երևույթների միջև, լուսաբանվում է Հայաստանի

Առաջին հանրապետության (1918-1920 թթ.) գեղարվեստական կյանքը, փաստական ու գեղարվեստական նյութի լայն ընդգրկումով ներկայացվում է ու նորովի մեկնաբանվում խորհրդահայ կերպարվեստը, շարադրվում 1960-1980-ական թթ.՝ խորհրդային դարաշրջանը եզրափակող երեք տասնամյակների հայկական քանդակագործության և գրաֆիկայի պատմությունը, ընդհանուր գծերով բնութագրվում են Հայաստանի Հանրապետության գեղարվեստական կյանքում 1991-ից հետո կատարված տեղաշարժերը, դրանց դրական ու բացասական հետևանքները: Աշխատությունը էապես խորացնում է ազգային նոր և նորագույն կերպարվեստի մասին մեր պատկերացումները: Նյութը դիտարկված ու լուսաբանված է տարբեր կողմերից, պատմամշակութային լայն համատեքստում, գիտական շրջանառության մեջ են դրվել մինչ այժմ անհայտ բազմաթիվ դեմքեր ու ստեղծագործություններ, բացահայտվել և մատնանշվել են XIX-XX դարերում հայ կերպարվեստին առավել բնորոշ, ուրույն գծերը: Մեթոդաբանական ամուր հիմքերի վրա խարսխված աշխատությունն ունի համապարփակ բնույթ՝ ընդգրկելով կերպարվեստի բոլոր հիմնական տեսակները: Այն տալիս է մեր կերպարվեստի պատմության նոր և նորագույն փուլերի զարգացման ամբողջական ու, կարևոր է, գիտական օբյեկտիվ պատկերը՝ բացահայտելով XIX-XX դդ. հայ նկարչության և քանդակագործության ազգային առանձնահատկությունները: Իսկ գիտական շրջանառության մեջ դրված հայերեն մասնագիտական մի շարք տերմինները և հասկացությունները հարստացնում են արվեստաբանության ասպարեզում գործածվող բառապաշարը:

Ծանրակշիռ է գիտնականի ներդրումը «Հայ արվեստի պատմություն» կոլեկտիվ, հիմնարար աշխատության ստեղծման գործում, որի համար նա արժանացել է 2009 թ. ՀՀ Պետական մրցանակի՝ կերպարվեստի ոլորտում: Նա հեղինակել է XIX-XX դդ. հայ կերպարվեստի պատմությանը նվիրված ընդարձակ բաժինները:

ՀՀ սփյուռքի նախարարության և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի համատեղ հիմնարկված «Ակնարկներ սփյուռքահայ կերպարվեստի պատմության» մատենաշարի անդրանիկ հատորը Ա. Աղասյանի «Քաջազի մշտավառ կանթեղը» (Ե., 2009) աշխատությունն էր՝ նվիրված ամերիկահայ անվանի գեղանկարիչ Քաջազունի Քեչեճյանին: Առաջին անգամ՝ փաստական նյութի լայն ընդգրկմամբ, հանգամանորեն ներկայացվում է արվեստագետի երկարատև, փորձություններով լի, բայց և նշանակալից իրադարձություններով, հիշարժան դեպքերով ու երջանիկ հանդիպումներով հագեցած կենսագրությունը: Հեղինակը Քաջազի արվեստը մատուցել է ժամանակագրական հերթագայությամբ՝ ըստ շրջանների, և լուսաբանել տարբեր կողմերից: Հատկապես կարևորվում են նրա կտավներում արտացոլված թեմատիկ և կերպարային բովանդակության, ազգային մտածողության, գունային սուր ընկալումների, տեխնիկական յուրահատուկ կատարման հետ կապված մի շարք խնդիրներ, որոնք դիտարկվում են նկարչի բնորոշ աշխատանքների օրինակներով, դրանց մանրախույզ քննությամբ:

Մասնագետների ուշադրությանն են արժանացել հայ երիտասարդ արվեստագետների (Հայաստանի երիտասարդ նկարիչները, Ե., 1987), ինչպես նաև մեր խոշորագույն վարպետների՝ Վարդգես Սուրենյանցի [Վարդգես Սուրենյանց (1860-1921), Ե., 2010], Մարտիրոս Սարյանի (Мартирос Сарьян. Раннее творчество, Е., 1992) և Երվանդ Քոչարի [Ерванд Кочар (к 100-летию со дня рождения художника), Е., 1999, Երվանդ Քոչար, Ե., 2010] մասին պատմող մենագրությունները, պատկերազարդ գրքերն ու ալբոմները: Ա. Աղասյանն է հեղինակել 2007 թ. Մոսկվայում լույս տեսած՝ Նոնա Ստեփանյանի «Искусство Армении»

մենագրության՝ հետխորհրդային Հայաստանի կերպարվեստին նվիրված գլուխը (Մ., 2007), «Հայոց պատմություն» քառահատորի՝ նոր և նորագույն շրջանի հայ կերպարվեստին վերաբերող բաժինները՝ երրորդ և չորրորդ հատորներում: Ա. Աղասյանի գիտական խմբագրությամբ հրատարակվել են 27 գիրք ու մենագրություն:

2011 թ. պետական պատվերով ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը հրատարակության է պատրաստել ավստրիացի ականավոր արվեստաբան Յոզեֆ Ստրժիգովսկու «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» գերմաներեն գրքի ռուսերեն թարգմանությունը (պատասխանատու խմբագիրներ՝ Մ. Հասրաթյան և Ա. Աղասյան):

Վաստակաշատ արվեստաբանի գիտական ու գիտակազմակերպական աշխատանքը հաջողությամբ զուգակցվում է մանկավարժական և հասարակական ակտիվ գործունեության հետ: Պրոֆեսորը տարիներ շարունակ դասավանդում է Երևանի պետական համալսարանում և Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում՝ սեփական փորձն ու գիտելիքները փոխանցելով ապագա արվեստաբաններին: Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել է թեկնածուական յոթ ատենախոսություն:

Ա. Աղասյանն ընդգրկվել է «Գրականության և արվեստի բնագավառում արվեստի ոլորտի ՀՀ պետական մրցանակների շնորհման» (2009), «Հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում ՀՀ պետական մրցանակների շնորհման» (2011) և «Հանրապետության նախագահի մրցանակների շնորհման»՝ արվեստի (2006) հանձնախմբերում: Նա ՀՀ ԳԱԱ գիտահրատարակչական խորհրդի, ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի բյուրոյի անդամ է, ՀՀ նկարիչների միության վարչության անդամ: Ընդգրկված է ՀՀ ԳԱԱ փորձագիտական ազգային բյուրոյի, Հայաստանի ազգային պատկերասրահի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Հայաստանի ժողովրդական արվեստի, ինչպես նաև Մարտիրոս Սարյանի ու Երվանդ Քոչարի թանգարանների գիտական խորհուրդների, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» և «Գիտության աշխարհում», ՀՀ նկարիչների միության «Կերպարվեստ» հանդեսների խմբագրական խորհուրդների կազմում:

Գիտական և գիտակազմակերպական ծանրակշիռ վաստակի համար Ա. Աղասյանն արժանացել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչման (2008), պարգևատրվել ՀՀ կրթության և գիտության նախարարության «Ոսկե հուշամեդալով» (2008) և ՀՀ մշակույթի նախարարության «Ոսկե մեդալով» (2008):

Այսօր էլ նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստագետի հմուտ ղեկավարությամբ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը շարունակում է գրել իր տարեգրության հերթական էջերը: Բավական է նշել, որ անցած 8 տարիների ընթացքում ինստիտուտում վերստեղծվել են գիտական ստորաբաժանումներ՝ Թատրոնի (2004) և Սփյուռքահայ արվեստի (2009) բաժինները, ինստիտուտի պատմության մեջ առաջին անգամ հիմնարկվել են արդեն ամենամյա դարձած՝ երիտասարդ արվեստաբանների գիտական նստաշրջանները (2005, 2007, 2008, 2009, 2011) և «Հայ արվեստի հարցեր» մատենաշարը (2006, 2009, 2010), հրատարակվել է արվեստագիտական գրականության պատկառելի գրադարան՝ 108 միավոր, պաշտպանվել են 5 դոկտորական և շուրջ տասը թեկնածուական ատենախոսություն, հաջողությամբ է լուծվում գիտական անձնակազմի սերնդափոխության հարցը, կազմակերպվել են մի շարք գիտական նստաշրջաններ, այդ թվում՝ «Վենետիկյան ընթերցումներ» միջազգային գիտաժողովը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի պատմության կարևոր էջերից մեկը դարձավ ինստիտուտի հիմնադրման 50-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումների շարքը (2008) և «ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ - 50» գրքի հրատարակումը՝ պետական պատվերով:

Շնորհավորելով բազմավաստակ արվեստաբանին՝ մաղթում ենք երկար տարիներ և գիտական նորանոր նվաճումներ:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտություններ» հանդեսի խմբագրություն